# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

**2023**

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Մաղթում ենք հաջողություն:**

1 **Բնութագրումով որոշել մեթոդը.**

*Քանակական մեթոդներից է: Այն առավել լայն կիրառում ունի հատկապես հասարակական աշխարհագրության մեջ: Նրա հիմնական նպատակը քանակական էլակետային տվյալների հավաքումը, մշակումը և վերլուծությունն է: Ո՞ր մեթոդն է:*

1) համեմատական
2) քարտեզագրական
3) օդատիեզերական
4) վիճակագրական

2 **Ծառերի բնի տարեկան օղակները ո՞ր կողմում են իրար շատ մոտ.**

1) հարավային
2) արևմտյան
3) հյուսիսային
4) արևելյան

3 **Որքա՞ն է հարավարևելյան կողմի ազիմուտը:**

1) 270°
2) 135°
3) 225°
4) 315°

4 **Արեգակի լույսը երկիր է հասնում.**

1) 9 րոպեում
2) 10 րոպեում
3) 11 րոպեում
4) 8 րոպեում

5 **Եթե քարտեզի թվային մասշտաբը 1 : 250 000 000 է, ապա դրա անվանական մասշտաբը կլինի.**

1) 1 սմ-ում՝ 25 կմ
2) 1 սմ-ում՝ 250 կմ
3) 1 սմ-ում՝ 2500 կմ
4) 1 սմ-ում՝ 2,5 կմ

6 **Ո՞ր ապարն ունի նստվածքային օրգանական ծագում:**

1) տուֆը
2) ավազը
3) տորֆը
4) կավը

7 **Երկրի մակերևույթի անհարթությունների ամբողջությունը կոչվում է.**

1) ռելիեֆ
2) պլատֆորմ
3) հորստ
4) սարահարթ

8 **Օրվա ընթացքում 8 չափումներից ստացված ցուցանիշը +24˚է: Օդի օրական միջին ջերմաստիճանը կլինի.**

1) +2˚
2) +5˚
3) +6˚
4) +3˚

9 **Որի՞ չափման միավորը բալը չէ:**

1) ջրի աղիության
2) ամպամածության
3) երկրաշարժի ուժգնության
4) քամու ուժի

10 **Գետի հունի այն քարքարոտ, ժայռոտ տեղամասը, որն արգելք, խոչընդոտ է գետի հոսքի համար, խանգարում է նավարկությանը, կոչվում է.**

1) սահանք
2) կանիոն
3) հեղեղատ
4) ակունք

11 **Երկրակեղևի իջած տեղամասերում՝ գրաբեններում առաջացած լճերը կոչվում են.**

1) մնացորդային
2) սառցադաշտային
3) տեկտոնական
4) արգելափակման

12 **Բնական համալիրներից ո՞րն է աչքի ընկնում հողի առավել բարձր բերրիությամբ.**

1) տունդրան
2) անապատը
3) տափաստանը
4) տայգան

**13** **Ո՞ր բնական զոնային բնորոշ բուսատեսակներ են ուղտափուշը, օշինդրը, աղաբույսը։**

1) հասարակածային խոնավ մշտադալար անտառների
2) անապատների և կիսաանապատների
3) սավաննաների և նոսրանտառների
4) մերձարևադարձային մշտականաչ, կոշտատերև անտառների և թփուտների

**14** **Այն օդային զանգվածները, որոնք ձևավորվում են 20˚- 40˚ աշխարհագրական լայնություններում և բնորոշվում են բարձր ջերմությամբ, չորությամբ և փոքր թափանցիկությամբ (մեծ փոշոտվածությամբ), կոչվում են.**

1) արևադարձային օդային զանգվածներ
2) հասարակածային օդային զանգվածներ
3) արկտիկական (անտարկտիկական) օդային զանգվածներ
4) բարեխառն օդային զանգվածներ

**15** **Տրված կլիմայական գոտիներից ո՞րն է Եվրասիայում զբաղեցնում ամենամեծ տարածքը։**

1) արկտիկականը
2) արևադարձայինը
3) հասարակածայինը
4) բարեխառնը

**16** **Բնութագրումով որոշել գետը.**
*Եվրոպայի խոշոր գետերից է։ Նրա ափին են գտնվում մի քանի երկրների մայրաքաղաքներ։ Ո՞ր գետն է.*

1) Դանուբ
2) Հռենոս
3) Լուար
4) Դնեպր

**17** **Բնութագրումով որոշել գետը.**
*Ամուդարյա ու Սիրդարյա գետերը թափվում են մնացորդային ծագման լճի մեջ։ Այդ գետերի ջրերը ոռոգման նպատակով օգտագործելու պատճառով լիճը ծանծաղել է։ Ո՞ր է այդ լիճը։*

1) Բայկալ
2) Կասպից
3) Արալյան
4) Բալխաշ

**18** **Ո՞ր լեռնաշղթան է ձգվում հյուսիսից հարավ.**

1) Հիմալայներ
2) Ուրալյան
3) Էլբուրս
4) Արևելապոնտական

**19** **Օվկիանոսային ո՞ր հոսանքն է անցնում Աֆրիկայի հյուսիսարևելյան ափերի մոտով.**

1) Մոզամբիկի
2) Կանարյան
3) Բենգելյան
4) Սոմալիական

**20** **Ո՞րը նեղուց չէ.**

1) Ջիբրալթարի
2) Մոզամբիկի
3) Սուեզի
4) Բաբ-էլ-Մանդեբի

**21** **Տրվածներից որո՞նք են դաշտավայրեր.**

1) Կենտրոնական և Մեծ
2) Մեծ ավազան և Կոլորադոյի
3) Միսիսիպիի և Մերձատլանտյան
4) Լավրենտյան և Կոլումբիական

**22** **Ո՞ր աշխարհագրական օբյեկտն է գտնվում Մեքսիկական ծոցի մոտ.**

1) Յուկատան թերակղզի
2) Նյուֆաունդլենդ կղզի
3) Կալիֆոռնիա թերակղզի
4) Բաֆինի երկիր կղզի

**23** **Ո՞ր կենդանատեսակը *չի* ապրում Հարավային Ամերիկայում:**

1) կոնդոր
2) պումա
3) լամա
4) բիզոն

**24** **Ո՞ր ծովն է ողողում Ավստրալիայի հյուսիսային ափերը։**

1) Թասմանի
2) Կորալյան
3) Ճավայի
4) Արաֆուրյան

**25** **Անտարկտիդայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ։***

1) Ամենահարավային մայրցամաքն է։
2) Ամենաբարձրադիր մայրցամաքն է։
3) Ամենափոքր մայրցամաքն է։
4) Ամենաուշ հայտնագործված մայրցամաքն է։

**26** **Ըստ պետական կառավարման ձևի՝ հանրապետություններ են.**

1) Նորվեգիան և Նիդեռլանդները
2) Շվեդիան և Քուվեյթը
3) Մեծ Բրիտանիան և Դանիան
4) Իսրայելը և Թուրքիան

**27** **Ո՞ր աշխարհամասում են բացակայում միապետությունները։**

1) Եվրոպա
2) Ամերիկա
3) Աֆրիկա
4) Ասիա

**28** **«Պետություն-պետական կառուցվածք» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Կանադա-դաշնային
2) Ֆրանսիա-դաշնային
3) Հնկաստան-ունիտար
4) Գերմանիա-ունիտար

**29** **Բնակչության տեղաբաշխման վրա ազդող գործոն *չէ։***

1) պատմականը
2) բնականը
3) տնտեսականը
4) լեզվականը

**30** **Այն երևույթը, երբ ամրապնդվում է ազգի լեզվական և մշակութային ընդհանրությունը, և ազգը դառնում է ավելի միասնական և ամրակուռ, կոչվում է.**

1) կոնսոլիդացիա
2) ուրբանիզացիա
3) ագլոմերացիա
4) ասիմիլյացիա

**31** **Եվրոպայում ապրող ո՞ր միակ ժողովուրդն է դավանում բուդդայականություն։**

1) թաթարները
2) իտալացիները
3) կալմիկները
4) ալբանացիները

**32** **Արդյունաբերության հին ճյուղ է.**

1) հրթիռաշինությունը
2) գունավոր մետաղաձուլությունը
3) ավտոմոբիլաշինությունը
4) օրգանական սինթեզի քիմիան

**33** **Գյուղտնտեսական հողահանդակների կառուցվածքի մեջ *չեն* մտնում.**

1) արոտավայրերը
2) բազմամյա տնկարկները
3) կառուցապատված տարածքները
4) վարելահողերը

**34** **Առանձին երկրների մասնագիտացումը որոշ ապրանքների արտադրության կամ ծառայությունների մատուցման գծով ու համաշխարհային շուկայում դրանց վաճառքը կամ փոխանակումը կոչվում է.**

1) աշխատանքի միջշրջանային բաժանում
2) համախառն ներքին արդյունք
3) աշխատանքի միջազգային բաժանում
4) համախառն ազգային եկամուտ

**35** **Մեծ Բրիտանիայի կլիման.**

1) բարեխառն ցամաքային է
2) բարեխառն մուսսոնային է
3) բարեխառն խիստ ցամաքային է
4) բարեխառն ծովային է

**36** **Վրաստանում առավել մեծաթիվ ազգային փոքրամասնություն են.**

1) քրդերը
2) օսերը
3) հույները
4) հայերը

**37** **Եգիպտոսի ափերը ողողող ծովերն են.**

1) Միջերկրականը և Կարմիրը
2) Ադրիատիկը և Բարենցի
3) Մեռյալը և Կարմիրը
4) Կարիբյանը և Միջերկրականը

**38** **Ընտրել «պետություն-մայրաքաղաք» համապատասխանությունների ճիշտ շարքը:**

| | |
|---|---|
| 1. Արգենտինա | ա. Սանտյագո |
| 2. Չիլի | բ. Բուենոս Այրես |
| 3. Վենեսուելա | գ. Լիմա |
| 4. Պերու | դ. Կարակաս |

1) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
2) 1-բ, 2-ա, 3-գ, 4- դ
3) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
4) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ

**39** **Ավստրալիային պատկանող կղզի է.**

1) Թասմանիան
2) Սամոան
3) Ֆիջին
4) Կալիմանտանը

**40** **ԱՄՆ-ի ո՞ր ընկերությունն է արտադրում ինքնաթիռներ:**

1) «Կրայսլեր»-ը
2) «Այ Բի Էմ»-ը
3) «Բոինգ»-ը
4) «Մայքրոսոֆթ»-ը

քարտեզ 1

**41** Քարտեզ 1-ում ո՞ր տառով է նշված Իտալիան:

1) Գ
2) Դ
3) Զ
4) Ա

**42** Քարտեզ 1-ում ո՞ր տառով է նշված Իսլանդիայի մայրաքաղաքը:

1) Ե
2) Է
3) Ը
4) Բ

**43** **Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ:***

1) Ընդերքը հարուստ է վառելիքային օգտակար հանածոներով:
2) Ոսկու պաշարներ հայտնաբերվել են Սոթքում և Մեղրաձորում:
3) Պղնձահրաքարի խոշոր պաշարներ կան Ալավերդիում և Կապանում:
4) Շատ կան հանքային բուժիչ աղբյուրներ:




**քարտեզ 2**

**44** **Քարտեզ 2–ում Վարդենիսի լեռնաշղթան ո՞ր տառով է նշված.**

1) Բ
2) Դ
3) Ը
4) Ա

**45** **Քարտեզ 2–ում Ապարանի ջրամբարը ո՞ր տառով է նշված.**

1) Գ
2) Զ
3) Ե
4) Է

**46** **Ո՞ր լեռներն են ծալքաբեկորավոր։**

1) Արցախի
2) Ծաղկանց
3) Ջավախքի
4) Բյուրակնի

**47** **ՀՀ ո՞ր հարթավայրն է ավելի բարձրադիր.**

1) Ապարանի սարահարթը
2) Շիրակի դաշտը
3) Արարատյան դաշտը
4) Աշոցքի սարահարթը

**48** **Առողջարանային գործառույթ կատարող քաղաքներ են.**

1) Ջերմուկը և Ծաղկաձորը
2) Արարատը և Եղեգնաձորը
3) Ապարանը և Ալավերդին
4) Կապանը և Քաջարանը

**49** **ՀՀ բնակչության բնական աճի վրա ի՞նչը բացասական ազդեցություն *չի* թողել։**

1) ամուսնությունների թվի կրճատումը
2) տղամարդկանց արտագաղթը
3) թոշակային տարիքի բարձրացումը
4) գործազրկության աճը

**50** **Վարարակն կոչվող հին բնակավայրը ներկայումս կոչվում է.**

1) Ասկերան
2) Ստեփանակերտ
3) Հադրութ
4) Մարտակերտ

**51** **«Երկիր—հանքային ռեսուրսի հարուստ պաշարներ» զույգերից ընտրել *սխալը*.**

1) Թուրքիա — նավթ
2) Իրան — բնական գազ
3) Բրազիլիա — երկաթաքար
4) Չիլի — պղինձ

**52** **Գետի վրա ջրամբարի կառուցման հետևանքով.**

1) գետի ջրերը դառնում են աղի
2) փոխվում է գետի բնական ռեժիմը
3) գետի վերին հոսանքում հողատարածքները ճահճանում են
4) աղտոտվում է մթնոլորտը

**53** **Ո՞ր տարածաշրջանում է աղքատության մակարդակը համեմատաբար բարձր։**

1) Հյուսիսային Ամերիկա
2) Արևելյան Ասիա
3) Կենտրոնական Աֆրիկա
4) Արևմտյան Եվրոպա

**54** **Հողերի էրոզիայի պատճառ կարող է լինել.**

1) աղակալած հողերի լվացումը
2) անտառաբարելավումը
3) քարամաքրումը
4) արոտավայրերի գերարածեցումը

**55** **Ո՞ր տարածքն է վաճառվել։**

1) Լոթարինգիա
2) Էլզաս
3) Ալյասկա
4) Տրիեստ

**56** **Գրել այն հրաբուխների համարները, որոնք Աֆրիկայում են.**

1) Օրիսաբա
2) Էրեբուս
3) Դեմավենդ
4) Հեկլա
5) Ռուիս
6) Կրակատաու
7) Կամերուն
8) Կիլիմանջարո

**57** **Գրել այն թերակղզիների համարները, որոնք Ասիայում են.**

1) Ղրիմի
2) Թայմիր
3) Բալկանյան
4) Փոքր Ասիա
5) Յուտլանդիա
6) Հինդուստան
7) Կոլա
8) Կամչատկա

**58** **Գրել այն լճերի համարները, որոնք Ամերիկա աշխարհամասում են.**

1) Էրի
2) Բալխաշ
3) Մեծ աղի
4) Տիտիկակա
5) Վեներն
6) Վերին
7) Տանգանիկա
8) Էյր

**59** **Գրել այն գետերի համարները, որոնք *չեն* հոսում ՌԴ տարածքով.**

1) Պեչորա
2) Լենա
3) Կամա
4) Վիսլա
5) Ռոն
6) Ենիսեյ
7) Անգարա
8) Ամուր

**60** **Գրել այն մշակաբույսերի համարները, որոնք հացահատիկային են.**

1) ցորեն
2) բրինձ
3) թեյ
4) սոյա
5) վարսակ
6) գարի
7) շաքարեղեգ
8) սուրճ

**61** **Գրել Ախուրյանից սկիզբ առնող ջրանցքների համարները.**

1) Շիրակի
2) Արտաշատի
3) Ստորին Հրազդանի
4) Արզնի-Շամիրամի
5) Արմավիրի
6) Թալինի
7) Կոտայքի
8) Արաքսի

**62** **Հարավարևմտյան Ասիայի տրված պետությունները դասավորել ըստ հյուսիսից հարավ հաջորդականության:**

1) Իրաք
2) Սիրիա
3) Եմեն
4) Քաթար

**63** **Արաքսի ձախակողմյան վտակների համարները դասավորել դրանց երկարությունների աճման կարգով.**

1) Ախուրյան 2) Քասաղ 3) Հրազդան

64 Որոշել միևնույն միջօրեականի վրա գտնվող երկու կետերի միջև հեռավորությունը (կմ-վ), եթե դրանցից մեկը հս. լ. 12˚-ի վրա է, մյուսը՝ հվ. լ. 30˚-ի:

65 Երկրի բնակչության թիվը 9 մլն. մարդ է, բնակչության միջին խտությունը՝ 150 մարդ/կմ$^2$: Որքա՞ն է երկրի տարածքի մակերեսը:

(66-67) Երկրի բնակչության թիվը 1 մլն է: Մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը 25000 մարդ է, իսկ մահացածների թիվը՝ 10 000 մարդ:

66 *Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:*

67 *Որոշել բնակչության բնական աճի գործակիցը(‰):*

68 **Լեռը օվկիանոսի ափին է (0 մ բարձրության վրա)՝ 45° աշխարհագրական լայնությունում, 0° ջերմաստիճանի պայմաններում: Մթնոլորտային ճնշումը լեռան գագաթին 300 մմ է: Որոշել լեռան բացարձակ բարձրությունը (հաշվարկը կատարել 100 մմ-ով):**

69 **Աշխարհի բնակչության ռասայական կազմի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Բնակչության ռասայական և ազգային կազմերի սահմանները մշտապես համընկնում են:
2) Ժամանակակից խառը ռասաների ներկայացուցիչները լայն տարածում ունեն Լատինական Ամերիկայում:
3) Նեգրոիդ մեծ ռասայի տարածման հիմնական շրջանը Հարավային Ասիան է:
4) Ռասաների բնութագրիչ հատկանիշներն են լեզուն, մշակույթը և կրոնը:
5) Ռասայական հատկանիշների ձևավորման վրա ավելի շատ ազդեցություն են թողել սոցիալ-տնտեսական և քաղաքական, քան բնական գործոնները:
6) Մոնղոլոիդ ռասային բնորոշ են դեղնավուն մաշկը, սև և ուղիղ մազերը, աչքերի նեղ բացվածքը

70 **ՀՀ Արարատի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Հաղորդակցության գլխավոր ուղիներն ունեն տարանցիկ նշանակություն։
2) Տնտեսության առաջատար ճյուղն արդյունաբերությունն է։
3) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է։
4) Բարձրադիր շրջաններում գերիշխում են կիսաանապատային լանդշաֆտները։
5) Տարածքը կազմված է երկու հստակ արտահայտված մասերից՝ լեռնային և հարթավայրային։
6) Բնապահպանական հիմնախնդիրներից է ցեմենտի արտադրության ժամանակ փոշու և այլ թափոնների առկայությունը։